

ԳՈՐԳԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

ՀԱՅՈՅ ՄՕՏ

Այս մասին համար հարկ եղած կարեւոր ազգագրական տուեալները կը պահսին դժբախտաբար: Հայկական սովորութեանց եւ աւանդութեանց վերաբերեալ աշխատութիւնները յաճախ մասնակի, եւ ընդհանրապէս արհեստ-արուեստի աւանդութեանց նիւթերը բոլորովին աննկատ ըրած են: Ատոր պատճառը դուցէ նիւթեր հաւաքողներու պակասը, կամ անոնց կարողութեան բազմակողմանի չըլլալն էր: Իսկ այսօր արդէն ուշ է Թուրքիոյ կորսուած հայութեան նման նիւթերը մատենադրութեան յանձնելու համար: Դեռ կը մնայ Պարսկահայութիւնը իր Ուրմիոյ, Սալմաստի, Մակուի, Խոյի մնացորդներով, որոնք ցաւալի է ըսել, բոլորովին մոռցուած կը մնան: Պակասաւոր է նաեւ ներկայ Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն մէջ գոյութիւն ունեցած հայութեան ազգագրութիւնը, ինչպէս նաեւ արհեստ — արուեստներու մասին հայոց մօտ պահուած աւանդութեանց նիւթերը:

Մեզի կ'աւանդուի, որ Ղարաբաղի հայ կանայք «երբ վերջացնում են (գորգի) գործուածքը եւ մնում է մօտ մի արշին չգործած աւելի տեղ, խնձոյք են կազմում, հարեւաններին ու բարեկամներին կանչում գորգը կտրելու օրը»:

Զբերք, ամուլ կամ յղի կանայք այդ օրը դալիս են իրենց բախտը փորձելու, տղայ կամ աղջիկ կ'ունենա՞ն թէ ոչ. դրա համար ոստանի վրայ չգործուած թելերի մէջտեղից կտրում, ծակ են բաց անում, ամուլ կ'ինը անց է կենում երեք անգամ այդ ծակով եւ ոստանի տակ ոտները մեկնում: Գորգը կտրելուց ընկնում է նրա վրայ: Հանում են ասպը տալիս մի տղայի, որը ձի չինած գուրս է վաղում. եթէ փողոցում առաջի անգամը տղայի է պատահում, ասել է այդ կ'ինը տղայ կը ծնի, եթէ աղջկայ է պատահում՝ աղջիկ»:

«Գորգը կտրող կ'ինը, եթէ տնեցի չէ, կտրելուց առաջ մկրատը քսքսում է թելերին ու կանչում. կտրւմ չի՝ խալաթ բերէք, վեր կտրի՝ ընծայ բերէք: Ընծան ստանալուց յետոյ կտրում է»:

«Միջի հրաւիրուած անձանց լաւ ճաշ են տալիս եւ երեկոյեան